

Գանատայի տարածքին հանրահալաքներ կապացան առ ի զօրակցություն հայրենիքի դիմադրության շարժումին



Կարդալ էջ 4

Գանատահայությունը պահանջատիրության իր ձայնը բարձրացուց Օթթաուայի մէջ



Կարդալ էջ 5

Կեանքէն հեռացաւ ազգային ու պետական գործիչ Մեթր Վարդգէս Ծամլեանը



Կարդալ էջ 8

Գանատայի եւ Քէպէգի Հայ Դատի Յանձնախումբերը կ'ողջունեն Քէպէգ Նահանգի Կրթութեան Նախարարութեան Հաստատած Ցեղասպանութեան Ուղեցոյցի Մեկնարկը

Գանատայի Հայ Դատի յանձնախումբը (ANCC) ու Քէպէգի Հայ Դատի յանձնախումբը (ANCO) կ'ողջունեն Քէպէգ Նահանգի Կրթութեան նախարարութեան կողմէ ձեռնարկուած ցեղասպանութեան դասաւանդման ծրագրի ուղեցոյցի մեկնարկը:

Կրթական ծրագրի այս ուղեցոյցը մշակուած է ցեղասպանութեան Կրթական Հիմնադրամի (Genocide Education Foundation) եւ գործակից կազմակերպութիւններու, ինչպէս՝ Գանատայի Հայ Դատի յանձնախումբին կողմէ, որ Քէպէգ Նահանգի Կրթական մշակներուն համար պիտի ծառայէ իբրեւ սկզբնաղբիւր, ուսուցանելու ցեղասպանութիւններու յանցագործութեանց ու անոնց հետեւանքներուն մասին:

«Այս ծրագրի մեկնարկը կարեւոր իրադարձութիւն է Գանատայի Հայ Դատի յանձնախումբին համար, որ վերջին տարիներուն սերտօրէն համագործակցելով ցեղասպանութեան Կրթական Հիմնադրամին հետ, ձեռնարկեց այս ուղեցոյցը, որ կը միտի Քէպէգ Նահանգի միջնակարգ դպրոցներուն մէջ դասաւանդել Հայոց ցեղասպանութեան մասին, իրազեկ դարձնելով ցեղասպանութիւններու դրոյթներուն ու վայրագութեանց մասին», նշեց ցեղասպանութեան Կրթական Հիմնադրամի գործադիր խորհուրդին մօտ Քէպէգի Հայ Դատի յանձնախումբի ներկայացուցիչ Փրոֆեսոր Լալէ Մանճիկեանը:

Այս ծրագիրը ցեղասպանութեան վերաբերեալ առաջին համընդհանուր կրթա-

Հայ Դատ... Ծար. էջ 6

Ազգային բարերար տիկին Ծաքէ Կեօնճեան \$30,000 կը նուիրէ Ազգային առաջնորդարանին



Գանատայի Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանը կը յայտնէ, որ Տիկին Ծաքէ Կեօնճեան \$30,000 կը նուիրէ Թեմի Կիրակնօրեայ Դպրոցներու նոր դասագիրքերու պատրաստութեան ծրագրին համար: **Կարդալ էջ 3:**



BOOK YOUR TEST DRIVE TODAY!

TRO BACHEKJIAN
MIKE TROSSIAN
KEVORK ASADOURIAN

HONDA GABRIEL HONDA

7000, boul. Henri-Bourassa Est,
Montréal-Nord, QC H1G 6C4
☎ : 514 327-7777



Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN
NOW OPEN



Մեփականատեր
Յարութ Միփան

Հնտանեկան բացառիկ գործառնություն
ուր կը գտնէք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

 **IN HOUSE**

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիքի հաց եւ իրաքեան սոմուն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



Պետական եւ քաղաքական դեմքերու ներկայութեամբ Մոնթրէալի մէջ կապացաւ Հայոց Ցեղասպանութեան 107-ամեակի ոգեկոչման պաշտօնական հանդիսութիւնը

Շաբաթ Ապրիլի 23-ի կէսօրէ ետք ժամը 2-4ի միջեւ, Մոնթրէալի քաղաքական կեդրոնը գտնուող Place du Canada-ի մէջ, տեղի ունեցաւ Հայոց ցեղասպանութեան 107ամեակի պաշտօնական հանդիսութիւնը, կազմակերպութեամբ Քէպէզի հայ համայնքի միացեալ մարմինն: Ոգեկոչման հանդիսութիւնը կը վայելէր ներկայութիւնը Գանատայի մօտ ՀՀ դեսպանին եւ պատուոյ հիւպատոսին, ներկայութեամբ՝ դաշնակցային, նահանգային եւ քաղաքապետական մակարդակներու վրայ պետական ներկայացուցիչներու, ինչպէս նաեւ երեք կուսակցութիւններու, յարանուանութիւններու, կազմակերպութիւններու ներկայացուցիչներու եւ հայրենակիցներու:

Զոյգ քայլերգներով հանդիսութեան բացումը կատարեց Զարա Սարգսեան, որմէ ետք մէկ վայրկեան յոտնկայս լուծութեամբ, ներկաները յարգեցին մեր հին ու նոր նահատակներուն յիշատակը: Օրուան խորհուրդի բացման խօսքով հանդէս եկաւ օրուան հանդիսավար՝ Արիանէ Թապաքեանը եւ ապա բեմ հրաւրեց Քէպէզի Հայ Համայնքի միացեալ մարմնի ներկայացուցիչ Վիգէն Սարգիսեանին որ հայերէն լեզուով փոխանցեց իր ուղերձը իսկ Մարի Լոր Սիմէթիէն՝ ֆրանսերէնով:

Հրաւիրեալներէն առաջին հերթին խօսքը տրուեցաւ Գանատայի մօտ ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան Անահիտ Յարութիւնեանին, որուն յաջորդեց Հոգեհանգստեան պաշտօնի արարողութիւնը կատարողութեամբ Վերապատուելի Յովհաննէս Սվաճեանի, Տէր Դաւիթ Մարգարեանի, Տէր Կոմիտաս Միրզախանեանի եւ Տէր Գառնիկ Աւագ Քհնյ. Գոյունեանի:

Օրուան բեմավարը ապա ընթերցեց Գանատայի արտաքին գործոց նախարար Մելանի Ժօլիի ուղերձը:

Յաջորդաբար խօսք առին պահպանողական կուսակցութեանէն Senator Leo Housakos, Ազատական կուսակցութեանէն Fayçal El-Khoury եւ Annie Koutrakis.

Նարեկ վարժարանի երկրորդականի աշակերտները ներկայացուցին Ժազ Ս. Յակոբեանի «Կանք ու կը մնանք» բանաստեղծութիւնը, մէջբերումով մը Ուիլ-



իամ Սարոյեանի խօսքերէն:

Յաջորդաբար օրուան հանդիսավարը ընթերցեց տեսագրուած պատգամներ՝

Hon. Candice Bergen-էն leader of the conservative party of Canada, Jaqmeet Singh the leader of NDP, Yves Francois Blanchet-էն Leader of BLOC Quebecois,

Նորհրդարանի անդամ Alexandre Boulerice-էն NDP, եւ Claude Sauvé (conseiller de ville de montreal):

Ապա, Coalition Avenir Quebec-ի ներկայացուցիչ՝ Marc Baaklini փոխանցեց իր խօսքը:

Նումբով Բեմ բարձրացան Quebec Liberal Party-ի կուսակցութեան անդամներէն chef Dominique Anglade, Marwah Rizky, Christine St Pierre, Saul Polo, Gregory Kelley փոխանցելու իրենց խօսքը, որոնց յաջորդեց Assemblée Nationale du Québec (Chomedey)-ի ներկայացուցիչ Guy Ouellette-ին խօսքը:

Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի երկրորդականի աշակերտները կատարեցին “Ils sont tombé” երգը եւ Պարոյր Սեւակի «Նրանք Ընկան» ոտանաւորը:

Մոնթրէալի քաղաքապետ Վալէրի Փլանթէն ներկայացնող պատուիրակութիւնը բեմ բարձրացաւ եւ քաղաքապետութեան խօսքը փոխանցեց Mme Emilie Thuiller-ն: Իրեն կ'ընկերակցէին Francois Limoges, Despina Sourias, եւ Nathalie Goulet.

Equipe Ensemble Montreal-էն բեմ բարձրացան խումբ մը ներկայացուցիչներ, որոնցմէ խօսք առին chef Aref Salem եւ Վանա Նազարեան: Իրենց կ'ընկերակցէին՝ Mary Deros, Chahi Tarakjian եւ Alan De Souza.

ՀԲԸՄ Ալէք Մանուկեան վարժարանէն երկու աշակերտներ ընթերցեցին իրենց ուղերձները, Կրէթա Միլիթարեան հայերէն լեզուով եւ Սեդա Սիմոնեան ֆրանսերէնով:

Action Laval-էն բեմ բարձրացաւ Archie Cifelli փոխանցելու իր խօսքը, որուն յաջորդեց Թուրքերու կողմէ ցեղասպանութեան ենթարկուած ազգերէն Յունական դաղութի ներկայացուցիչ Andreas Crillis-ի խօսքը:

Յայտագրի վերջին ելոյթը յատկացուած էր Regina Assumpta վարժարանէն 16 տարեկան Ալեքսանտրա Քօսէյանի «Enfant d'Arménie» բանաստեղծութեան, գրուած՝ ցեղասպանութեան վերապրած իր մեծ-մեծ հօր յիշատակին: Ոտանաւորը ընթերցեց իր քոյրը Մարի լին Քօսէյան:

Աւարտին, ներկաները կարմիր ծաղիկներ դետեղեցին անմոռելի ծաղկեպսակին դիմաց եւ սիրուած երգիչ էլի Պէրպէրեանն ու իր նուագախումբը իրենց սիրալոյսով մասնակցութեամբ, խանդավառեցին ներկաները, հրամցնելով փունջ մը ազգային երգեր:

Թամար Ծափնեան

Ազգային բարերար տիկին Ծաքէ Կէօնճեան \$30,000 կը նուիրէ Ազգային առաջնորդարանին

Գանատայի Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանը սրտի անհուն ուրախութեամբ կը յայտնէ, որ Մոնթրէալարենակ Ազգային Բարերար Տիկին Շաքէ Կէօնճեան \$30,000 կը նուիրէ Ազգային Առաջնորդարանին, Թեմիս Կիրակնօրեայ Դպրոցներու նոր դասագիրքերու պատրաստութեան ծրագրին համար:

Ծրագիրը նկատի ունի Կիրակնօրեայ Դպրոցներու 6-7, 8-9 եւ 10-11 տարեկան աշակերտներուն համար կրօնական, եկեղեցական եւ բարոյագիտական բովանդակութեամբ դասագիրքեր պատրաստել, որ պիտի օգտագործուի Թեմիս բոլոր Կիրակնօրեայ դպրոցներուն մէջ՝ նախատեսուած բոլոր տարիքի աշակերտներուն: Ծրագիրը կ'ընդգրկէ աշակերտական դասագիրք, ուսուցչի ուղղեցոյց եւ խաղի ու վարժութիւններու տետրակ:

Նոր սերունդի հոգեւոր դաստիարակութեան նպաստող այս կարեւոր առաքելութիւնը կը ձգտի օժանդակութեան ձեռք մեկնել Կիրակնօրեայ դպրոցներու ուսուցիչներուն, որպէսզի Աստուծաշունչն ու քրիստոնէական դաստիարակութիւնը սիրելի ու հաճելի դարձնէ աշակերտներուն, որովհետեւ, Աստուծաշունչն է հիմքը մեր հաւատքին ու քրիստոնէավայել վարքին:

Առաջին խումբի դասագիրքերն ու ուղղեցոյցները նկատի առնուած են ի գործ դրուել՝ 2022-2023 դպրոցական տարեշրջանին սկզբնաւորութեան: Դասագիրքը բաղկացած պիտի ըլլայ 20 դասերէ, որոնց կտրիզը պիտի ըլլայ Աստուծաշունչ մատեանէն քաղուած նիւթեր՝ բոլորն ալ պարզ, հասկնալի ու համապարփակ պատմութիւններով համակուած: Իւրաքանչիւր նիւթ ներկայացուած պիտի ըլլայ Հորս նկարազարդուած էջերու մէջ:

Այս առիթով, Թեմիս Առաջնորդ Գերաշնորհ Տ. Բարգէն Արքեպիսկոպոս Զարեան իր օրհնութեան ու գնահատան-

Բարերար... Ծաք. էջ 6

CLIMATISATION TECHNO AC Air Conditioning/Heating/Ventilation Service, Repair, Sales, Installation Residential, Commercial General Construction (Doors, Windows, Insulation...) RBQ: 5784-1082-01 514-838-3230 climatisationtechnoac@gmail.com Vahram Noubarian / Sako Hasarkuzian	Groupe Sutton - Performer Inc. 705, boul. St-Jean, suite 160 Pointe-Clair, QC H3R 5M9 ALBERT ARKILANIAN Courtier immobilier résidentiel Residential Real Estate Broker aarkilanian@sutton.com Cell: 514.962.8822 Bur: 514.426.9595 Fax: 514.426.9596 www.albertarkilanian.com	Tro Bachekjian Représentant des ventes Véhicules d'occasion Pre-owned Sales Consultant tbachekjian@gabriel.ca Tél.: 514 327-7777 Poste: 4139 Télééc.: 514 262-8019 CONCESSIONNAIRE DE QUALITÉ
École De Conduite AZIG Driving School Tel: 514-336-1110 Moniteur-Instructeur AUTOECOLEAZIG@HOTMAIL.COM 1400, rue Sauvé O, Montréal, QC H4N 1C5, Suite 1438 Centre Adonis II	Hôtel du Parlement/ Parliament Building 1045, rue des Parlementaires Bureau/Office 321 Québec (Québec) G1A 1A4 Tél./Phone 418 644-4050 Bureau de circonscription/ Riding Office 4599, boulevard Samson, bur. 201 Laval (Québec) H7W 2H2 Tél./Phone 450 686-0166 Télééc./Fax 450 686-7153 Guy.Ouellette.CHOM@assnat.qc.ca assnat.qc.ca	NAZARETH CLASSIC GRILL BRING YOUR OWN WINE 550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6 Tel: 450.937.4064 Email: resto.nazareth@hotmail.com
KIA GABRIEL NORD 6464 Boul Henri-Bourassa E, Montréal-Nord, QC H1G 5W9 kiagabrielnord.com Sam Karadanaian Directeur des ventes Sales Manager T 514 323-7777 Ext. 5921 E skaradanaian@gabriel.ca F 514 395-9275	KRIKOR MAROUNIAN RLU Independent Financial Security Broker Life Insurance • Disability & Critical Illness Insurance Group Insurance • RRSP/TFSA/RESP Travel/Visitor Medical Insurance 11820 General Giraud Montreal, QC H4J 2H6 Res: (514) 332-7021 Fax: (514) 731-7499 Cell: (514) 927-2666 krikormar@gmail.com	NETTOYEUR MARIE-CLAIRE CUEILLETTE ET LIVRAISON GRATUITE À DOMICILE ET AU BUREAU (MONTRÉAL ET LAVAL) 2535 de Salaberry, Montréal Tél: 514.334.7830

Գանատայի տարածքին հանրահաւաքներ կայացան առ ի զօրակցութիւն հայրենիքի դիմադրութեան շարժումին

Յանուն արդար վարչակարգի, յանուն Արցախի եւ Հայաստանի անվտանգութեան, յանուն հայութեան միասնակամութեան, յանուն խաղաղ ու արժանապատիւ կեանքի՝ գանատահայութիւնը իր պայքարի բռնուցքը վեր բռնած մասնակից եղաւ մայիս 1-ին Երեւանի մէջ կայացածընդդիմութեան հանրահաւաքին, եւ իր զօրակցութիւնը յայտնեց Հայաստանի «Դիմադրութեան» շարժման։

ՀՅԴ ԳԵՄ-ի (Գանատայի Երիտասարդական Միութիւն) «Միմոն Զաւարեան», «Լեւոն Շանթ», «Բեկոր Աշոտ», «Արամ Մանուկեան», «Յառաջ» եւ «Արշաւիր Շիրակեան» մասնաճիւղերու կազմակերպութեամբ տարբեր քաղաքներու մէջ կազմակերպուեցան զօրակցական հաւաքներ։

Մոնթրէալի հայ կեդրոնին մէջ կայացած զօրակցական հաւաքին հեռակապով իր պատգամը փոխանցեց Հայաստանի Հանրապետութեան Ազգային ժողովի պատգամաւոր Լիլիթ Գալստեանը։ Ան ըսաւ, որ պետականութիւն ունենալ չունենալու խնդիր ունինք այսօր, Արցախի գոյութեանական խնդիր ունինք, խաղաղութեան կեղծ օրակարգով կը պարտադրուի Արցախի հայաթուամբ ու հայոց պահանջատիրութենէն հրաժարումը։ Ան ըսաւ. «Այսօր մարդիկ միաւորուել էին յանուն մէկ նպատակի՝ պետականութեան պահպանումը։ Պայքարի ալիքը հասել է Արժանիին, Ուրուկուէյ, Կլէնտէյլ, Միլիթէյլ, Թորոնթօ։ Մենք առջեւում ունենք մէկ նպատակ՝ պետականութեան պահպանման եւ հայրենիքի գոյութեանականութեան պահպանման խնդիր»։

ՀՅԴ ԳԵՄի Կեդրոնական վարչութեան անդամ Ռիթա Մուրատեան խոսք առնելով ըսաւ. «Դառնանք մէկ բռնուց ու պայքարինք։ Այստեղ կը գտնուինք զօրակցելու եւ ոչ մէկ զիջում ընդունելու։ Դէմ ենք, որ մեր ազգի իրաւունքները ուրացուին։ Հայաստանի ընկերներ, մենք ձեր կողքին ենք, մենք այստեղ ենք, Արցախի ժողովուրդին յայտնելու, որ ձեր կողքին ենք։ Հեռացնենք այս ազգաբաւ իշխանութիւնը։ Զարթի՛ր լաօ»։

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Գանատայի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Մհեր Գարաբաշեան խօսքը ուղղելով հաւաքին ըսաւ. «Հայ ժողովուրդը կը մերժէ ենթարկուիլ մեծապետական քաղաքական բեմադրութիւններուն, կը մերժէ կեղծ «թաւշայ» յեղափոխութիւնները։ Այսօր պէտք է պատրաստուինք երկարաշունչ պայքարի։ Մենք հայրենի ժողովուրդին թիկունքին պիտի կանգնինք։ Ձեռք կրնար հանգիստ ունենալ, երբ Արցախը դրուած է սակարկութեան սեղանին։ Մենք պիտի շարունակենք մեր զօրակցութիւնը դիմադրութեան շարժումին։ Այս պայքարը հայրենական իր բնոյթէն՝ վերածնեց համազգային պայքարի։ «Արցախի նշաճողը վար բերելու» ազգակործան տեսութիւնը կը մերժենք։ Մենք մեր ճակատագրին տէրը պէտք է ըլլանք, եւ այսօր, մեր դիմադրող ընկերները, մեր դիմադրող ժողովուրդը հայութեան ճակատագրին տէրը ըլլալու կամքը դրսեւորեցին Մայիս 1-ին։ Ծակատագրական պահ է, Գերարուստ պէտք է ճիգերու։ Կեցցէ՛ դիմադրութեան շարժումը, կեցցէ՛ մարտունակ Արցախը, կեցցէ՛ մեր համազգային պայքարը»։

Թորոնթոյի հանրահաւաքը սկիզբ առաւ Կիրակի, 1 Մայիս 2022-ին, յետմիջօրէի ժամը 1:00-ին, Թոյոնթոյի «Հայ կեդրոնին» դիմաց։ Մինչ Հայաստանի եւ Արցախի դրօշները բարձր կը

ծածանէին, ՀՄԸՄ-ի փողերախումբը հնչեցուց ազգային հայրենասիրական երգերու եղանակներ, որոնց միացաւ Ս. Աստուածածին եղեկեցւոյ զանգի ղօղանջը՝ պահը դարձնելով խորհրդաւոր ու ոգեւորիչ։

Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ օրուան հանգիստավար ՀՅԴ ԳԵՄի Սիմոն Զաւարեան մասնաճիւղի անդամ եւ ՀՅԴ «Ռոստոմ» պատանեկան միութեան վարիչ Վահէ Այվազեան։ Ան խօսքը ուղղելով համախմբուած հայորդիներուն, ըսաւ, որ Գէմպրիճի, Թորոնթոյի, Մոնթրէալ-Լաւալի եւ Վանգուվըրի մէջ նոյն պահուն իրականացուող հաւաքները կու գան հաստատելու, որ գանատահայութիւնը իր ամողջական զօրակցութիւնը կը յայտնէ Հայաստանի ընկերներուն, որոնք կը պայքարին հեռացնելու Փաշինեանն ու անոր վարչակարգը եւ փրկելու հայրենիքը գալիք աղէտէն։

Խօսք առաւ Թորոնթոյի համայնքի գործունեայ ազգային նորէն Մարտոյեանը։ Ան խօսքին սկիզբը կարեւորեց Թորոնթոյի համախմբումը, որու առանցքը հայու պատիւն է, հայ ոգին, հայ ազգային գաղափարախօսթիւնը՝ անկախ քաղաքական հայեացքներէն ու կազմակերպական պատկանելութենէն, ըսաւ ան, ապա հայ համայնքի անունով կոչ ուղղեց վարչապետ Նիկոլ Փաշինեանին. «Այստեղ կանգնած է արժանապատիւ սփիւռքը, այստեղ չկայ դաշնակցական, չկայ ռամկավար, չկայ հնչակեան, այստեղ կանգնած է արժանապատիւ հայը եւ կ'ըսէ ո՛չ Թրքացման, ո՛չ պառակտման»։

Մարտոյեան լուսարձակի տակ առաւ վերջին 4 տարիներու ընթացքին տեղի ունեցած իրադարձութիւնները, ապա ըսաւ. «Շատ ճակատագրական պահ է մեր երկրին համար. նժարին դրուած է Հայաստանի պետականութիւնը, հայութեան լինելութեան հարցը, հայկական բանակը, հետեւաբար միասնաբար առանց վարանելու պէտք է մէկ բռնուցք դառնանք եւ սատարենք Հայաստանի մեր հայրենակիցներուն, Արցախի մեր քոյրերուն եւ եղբայրներուն։

Անդրադառնալով Արցախի պատերազմին Մարտոյեան նշեց, որ 44-օրեայ պատերազմի ժամանակ հերոս տղաքը մինչեւ իրենց արեան վերջին կաթիլը կոխէ մղած են թշնամիին դէմ, մինչեւ իրենց արեան վերջին կաթիլը կանգնած են սահմանին վրայ, բայց նիկողական իշխանութիւնը միտումնաւոր ձեւով բանակը տարած է պարտութեան, իսկ վերջերս ալ անամօթաբար յայտարարած, թէ կրնային զոհեր չունենալ, բայց կ'ունենային նոյն արգիւնքը. «Եթէ արգիւնքը նոյնն էր մնալու, ով էր, Նիկոլ՝, քեզ խանգարողը, 5000 լուսաւոր տղա՞քն էին քեզ խանգարողը, Քրիստափոր Արթի՞նն էր քեզ խանգարողը, Գէորգ Հաճեա՞նն էր, Յարութ Բանոյեա՞նն էր, Մովսէ՞սը, թէ՞ Յակոբն էր», հարցադրեց Մարտոյանը, ապա աւելցուց, որ Նիկոլ Փաշինեանը Հայաստանի Հանրապետութեան 30 տարուան դիւանագիտութիւնը հիմ քէն քանդեց եւ հասցուց գէրոյական կէտի։ Մարտոյեան հաստատեց, որ Նիկոլ Փաշինեանի սարսափ կը պատճառեն արժանապիւ հայն ու Արցախի դրօշը։ «Արցախը անոր համար հայրենիք չէ, Արցախը անոր համար ծանրութիւն էր, որմէ կ'ուզէր ձեռքադատիլ ամէն գնով, բայց ի վերջոյ սփիւռքն ու ամբողջ հայութիւնը պիտի ձեռքադատին Նիկոլէն» ըսաւ, ապա եզրափակեց խօսքը ուղղելով վարչապետ Նիկոլ Փաշինեանին. «Հայաստան-սփիւռք յարաբերութիւնները դուռ խաթարած են, Պատերազմն ու չարիքը դուռ բերած են, պառակտումն ու հայատեհացութիւնը

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 107-ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈԶՈՒՄ ՎԱՆԳՈՒՎՐՈՒ ՄԷՋ



24 Ապրիլ 2022ին ժամը 2:00-ին Վանգուվըրի Միացեալ յանձնախումբի կազմակերպութեամբ Վանգուվըրահայութիւնը մեծ շուքով նշեց Հայոց ցեղասպանութեան 107րդ ամեակը։

Հաւաքը տեղի ունեցաւ Վանգուվըրի նահատակաց յուշակոթողին մօտ։ Հոգեւոր հովիւներու, եւ դպրաց դասի անդամներու մասնակցութեամբ կատարուեցաւ աղօթք նահատակներուն յիշատակին։ Ոգեկոչման արարողութեան ներկայ էին նաեւ կառավարական դէմքեր Գանատայի խորհրդարանի անդամ Թէրի Պիչ եւ Պրիթիշ Գոյումպիոյ նահանգային խորհրդարանի անդամ Ատրիան Տիբս։

Միացեալ յանձնառմբի կողմէ կազմակերպուած օրուան յայտագիրը կը պարփակէր օրուայ խորհուրդը ներկայացնող փունջ մը երգեր եւ ասմունք, եւ զոյգ լեզուներով վկայութիւններ։ Կառավարական հիւր ներկայացուցիչները օրոյս աւարտին խօսք առին եւ ոգեկոչեցին Հայոց Յեղասպանութեան նահատակներու յիշատակը։

Սիմոն Վրացեան Կոմիտէութեան՝ Լրատուական Յանձնախումբ

դուռ բերած են եւ մեր հերոս տղաներուն մահուան պատճառ դուռ դարձած են։ Ոչ ուն կաս սփիւռքին համար, ոչ ալ քու թրքասէր կուսակցութիւնը։ Սփիւռքը մեծած է քեզ։ Պիտի պայքարինք մինչեւ վերջ, մինչեւ քեզ ու բոլոր թրքահպատակները դուրս չպրտենք մեր հայրենիքէն»։

Խօսք առաւ տէր Տաթեւ ա. քհնյ. Միքայէլեան։ Ան նշեց, որ հայ ժողովուրդն ու հայրենիքը օրհասական պայմաններու մէջ կը գտնուին. մէկ կողմէն արտաքին թշնամին կը փորձէ հայոց հողերը գրաւել, միւս կողմէն ներքին դաւաճանութիւնը ծայրայեղութեան գազաթնակէտին հասած կը փորձէ զիջումներով, պարտութեան իրավիճակին մէջ ամէն ինչ յանձնել թշնամիին ու քալել, երբ տակաւին չէ ամօքած Արցախի ազատամարտի ընթացքին հայրենիքի պաշտպանութեան ճանապարհին նահատակուած հերոսներուն յիշատակը։

Թորոնթոյի Հայ կեդրոնի յորակից միութիւններու եւ կազմակերպութիւններու պատգամը տուաւ Խաթակ Գուլաճեանը։ Ան խօսքին սկիզբը լուսարձակի տակ առաւ 44-օրեայ Արցախի պատերազմէն մինչեւ այսօր հայ իրականութեան մէջ զարգացող դաժան իրադարձութիւնները, ապա մատնանշեց, որ ՀՀ իշխանութիւններու դրսեւորած վարքագիծը կը վտանգէ Արցախի ճակատագիրը – հարցականի տակ կը դնէ հայոց երկրորդ պետականութեան յետագայ կարգավիճակի հարցը, մինչ Ռուսական խաղաղապահ ուժերու ներկայութիւնը միայն փրկուն խաղաղութիւն կ'ապահովէ Արցախի եւ արցախահայութեան համար։

Անդրադառնալով ահազանգային կացութեան պատգամաբերը ըսաւ, որ շարժման մէջ է Հայաստանը, Երեւանէն մինչեւ հեռաւոր քաղաքներ։ Օրը մօտեցած է հայրենիքը վերջնականապէս ձերբազատելու կործանարար վարչախումբէն։ Զարթնումի կոչերը ուղղուած են նաեւ սփիւռքին։ Հայաստանի ընդդիմադիրներէն առաջ, անկա հնչեց Արցախի խորհրդարանէն արձակուած միաձայն յայտարարութեան ճամբով։ Ապա կոչ ուղղեց զարթնելու եւ ըսաւ. «Այսօր, Բոլո՛րս, Վանգուվըրէն Գէմպրիճ, Գէմպրիճէն Թորոնթօ, Թորոնթոյէն Մոնթրէալ ու Լաւալ եւ աշխարհի տարբեր անկիւններէն կը միանանք Հայաստանի պայքարող ժողովուրդին եւ մասնակից կը

դառնանք պայքարին, բոլորի հետ միասին։ Զարթնինք պատերազմի ստեղծած յուսալքութեան թմբիւնէն, զարթնինք թրքահաճոյ այս իշխանութիւններու մեղկուրցուցած սուտերէն, զարթնինք անվտանգութեան սուտ լոգունգներ մեր գլխուն տեղացուցած տմարդի իշխանութիւններէն։ Վտարենք թուրքի կամակատար, իրենց տխմար շարասիւներով հայ մայր սպաննող իշխանութիւնները»։

Գուլաճեան իր խօսքին մէջ նշեց, որ պայքարը չի ճանչնար որ-է կուսակցական կամ խմբային պատկանելիութիւն։ Հաւաքներու նպատակը ժելսը հեռացնելն է եւ երկիրը փրկել, որմէ ետք միայն կարելի պիտի ըլլայ ձեւաւորել արժանիներու կառավարութիւն, ազգային կառավարութիւն, որ կը ստանձնէ այս պատասխանատուութիւնը, կը կեդրոնացնէ ողջ հայ ժողովուրդի ներուժը, կը համախմբէ ժողովուրդը, կը վերացնէ այս թշնամութիւնը ու երկիրը դուրս կը բերէ անել լիճակէն։

Խօսքի աւարին ան ըսաւ, որ ներկայ պայքարը ունի մէկ նշանաբան՝ յանուն հայի, յանուն Հայաստանի, յանուն Արցախի, յանուն հայ ժողովուրդի, արժանապատիւ ժողովուրդի, յանուն մեր պապերուն ու նահատակներուն պայքար՝ թօթափելու ատելութիւնը, բաժանարար գիծերը, ազգային արժէքներու պղծումը, ապա եզրափակեց խօսքը ըսելով. «Պայքար՝ փակելու համար պառակտուածութիւններու ու անհանդուրժողականութեան էջը։ Որպէսզի պահենք հայրենիքը, որպէսզի իմաստաւորենք մեր գոյութիւնը սփիւռքի մէջ, Որպէսզի պահենք այս եկեղեցին, այս կեդրոնը, այս դպրոցը։ Դիմադրենք, որպէսզի հայ մնանք»։

Հանրահաւաքի ամբողջ ընթացքին ներկաները հնչեցուցին «Հայաստա՛ն, ոտքի», «Արցա՛խ, ոտքի», «Սփիւռք, ոտքի», «Սփիւռքը Արցախի կողքին է», «Առանց Նիկոլ Հայաստան», «Թուրքն իմ թշնամին է», «Հայաստան թրքական միջանցք չէ», «Արցախը Ազրպէյճանի մաս պիտի չկազմէ», «Տէր ենք Արցախի, տէր ենք Հայաստանի» փանկարկումները։

ՀՅԴ Գանատայի պատանեկան միութիւններու, յանձնառու երիտասարդութեան եւ հայ համայնքի մասնակցութեամբ դիմադրութեան շարժման զօրակցական հաւաքներ կայացան նաեւ Վանգուվըրի, Գէմպրիճի, Համիլթընի եւ Սէնթ Գաթրինգի մէջ։

Սիւլի Արէլեան

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 107-ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ ԳԷՄՊՐԻՃԻ ՄԷՋ

Ուրբաթ, 22 Ապրիլ, 2022–ի երեկոյեան, Գէմպրիճի Հայ Կեդրոնէն ներս տեղի ունեցաւ Ապրիլեան Մեծ Եղեռնի ոգեկոչում, կազմակերպութեամբ՝ Գէմպրիճի Հայ Դատի յանձնախումբին:

Հանդիսութեան ներկայ էին, շրջանի հոգեւոր հովիւը, ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտէի եւ Գանատայի Հայ Դատի Շրջանային յանձնախումբի անդամներ, Գանատայի Հայ Դատի գրասենեակի գործադիր տնօրէնը, քաղաքական հիւրեր, ՀՅԴ «Արամ–Դրօ» կոմիտէի ներկայացուցիչը, պատկան մարմիններու եւ միութիւններու ներկայացուցիչներ եւ մեծն Գէմպրիճի տարբեր շրջաններէ ժամանած հայորդիներ:

ՀՄԸՄ Գէմպրիճի դրօշակակիր սկսուածներու առաջնորդութեամբ, սրահ մուտք գործեցին պատուոյ հիւրերը, որմէ ետք Գանատայի եւ Հայաստանի օրհներգներով հանդէս եկաւ Լուսիկ Արոյեան, ապա ներկայները մէկ վայրկեան յոտնկայս լռութեամբ յարգեցին յիշատակը մէկ ու կէս միլիոն նահատակներուն: Բեմ բարձրացաւ օրուան հանդիսավար՝ Ալիս Նաճարեանը, որ անդլերէն լեզուով ամփոփ պատմական մը ներկայացնելէ ետք ողջունեց ներկաները, որմէ ետք ընկ՝ Յոլեր Մկրտիչեան հայերէն լեզուով փոխանցեց ՀՅԴ «Արամ–Դրօ» եւ Գէմպրիճի Հայ Դատի յանձնախումբի խօսքը: Բեմ բարձրացաւ ՀՅԴ ԳեՄ–ի «Արամ Մանուկեան» մասնաճիւղի անդամ՝ ընկ. Գարլօ Ահարոնեանը եւ մեկնաբանեց «Ախպերս ու Ես» երգը:

Օրուան պատգամաբերն էր, Գանատայի Հայ Դատի գործադիր տնօրէն ընկ. Սեւակ Պէլեանը: Ան իր պատգամի սկիզբը յայտնեց, թէ այսօրուան մեր հաւաքը դրական ապացոյց է, որովհետեւ հակառակ հայութեան դիմադրաւած ճնշումներուն, մենք չնհանջեցինք: Ընկ. Սեւակ յայտնեց նաեւ, որ այս օրը սուգի օր չէ այլեւս, այլ հպարտութեան օր է, որովհետեւ մենք չենք ճանչնար վախը եւ չենք ընդունիր որեւէ արգելք արդարութեան հասնելու ճանապարհին: Ան իր խօսքին մէջ նշեց, թէ Թուրքիոյ եւ Ազրպէյճանի վերջին գործողութիւնները կը հանդիսանան Հայոց Յեղասպանութեան շարունակութիւնը եւ նոր սպառնալիք են Հայ ժողովուրդի գոյութեան: Պատմութիւնը կրկնուեցաւ 44–օրեայ Արցախեան պատերազմի ընթացքին, հայերու յիշողութիւնները վերանորոգելով, որոնք Յեղասպանութեան պատճառով այժմ աշխարհով մէկ սփռուած են: Պէլեան շեշտեց, որ Հայոց Յեղասպանութիւնն ու Արցախեան պատերազմը պէտք չէ այլեւս միայն խորհրդանշական հռչակադրերով նշուին, այլ ամենայն արագ միջոցին, պէտք է վճռական գործողութիւններու անցնիլ, որպէսզի կանխուի հերթական ցեղասպանութիւնը: Իր խոսքը եզրափակելով ըսաւ, թէ Յեղասպանութեան ժխտումը ունի ուղղակի հետեւանքներ եւ բառերը անբաւարար են այս իրադարձութիւնները կանխելու: Քաղաքական որոշումներու ընդմէջէն քաղուած դասերը հական նշանակութիւն ունին որոշումներ առնելու, կանխելու նոր ցեղասպանութիւններ: Մենք հաւաքական պատասխանատուութիւն ունինք միշտ միասնաբար գործելու, եւ ոչ թէ միայն այն ժամանակ երբ յարմար է քաղաքականապէս:



Ապա, յաջորդաբար բեմ հրաւիրուեցան եւ իրենց զօրակցական խօսքերը ուղղեցին Հայ ժողովուրդին եւ ներկաներուն օրուան քաղաքական հիւրերը՝ Գանատայի խորհրդարանի անդամներ՝ Պրայըն Մէյ (MP of Cambridge, Parlamentari Secretary to the Ministry of National Defence, Chair of Canada–Armenia Parliamentary Friendship Group), Դիմ Լուիզ (MP of Kitchener–Conestoga), Պարտիշ Չակկէր (MP of Waterloo), Վալըրի Պրատֆորտ (MP of Kitchener South–Hespeler), Մայք Մորիս (MP of Kitchener Centre), Օնթարիոյի խորհրդարանի անդամ՝ Պէլինտա Քարահալիս (MPP of Cambridge), Գէմպրիճի քաղաքապետ՝ Քաթրին Մըգ Կէրի (Mayor of Cambridge), Քիչըրի քաղաքապետ՝ Պէրի Վրպանովիչ (Mayor of Kitchener), Նորթ Տամֆրիսի քաղաքապետ՝ Սու Ֆաքսըն (Mayor of North Dumfries), Քարէն Րէտմէն (Waterloo Regional Chair), Ժան Կոտմէն (Staff Superintendent–Waterloo Regional Police Services), Տոնա Րիտ (City of Cambridge Councillor), Նիքոլաս Էմէթա (City of Cambridge Councillor):

Հանդիսութեան աւարտին, ՀՅԴ ԳեՄ–ի «Արամ Մանուկեան» մասնաճիւղի նախաձեռնութեամբ, տեղի ունեցաւ ծաղկեպսակի զետեղում եւ մոմավառութիւն, Մուսա Լերան հերոսամարտի յուշարձանին մօտ: Ներկաները երգեցին «Ատանայի Ողբը», որմէ ետք Տէրունական Աղօթքով Ապրիլեան Մեծ Եղեռնի107–ամեակի ոգեկոչումը հասաւ իր աւարտին:

Գանատահայութիւնը պահանջատիրութեան իր ճայնը անգամ մը եւս բարձրացուց Օթթաուայի մէջ

Հայոց Յեղասպանութեան 107-րդ Ամեակի Ոգեկոչումը Օթթաուայի Մէջ

Կիրակի, 24 Ապրիլ 2022–ին, Գանատահայութիւնը պահանջատիրութեան իր ճայնը անգամ մը եւս բարձրացուց Օթթաուայի մէջ, մասնակցութեամբ Թորոնթոյէն, Գէմպրիճէն, Լաւալէն, Մոնթրէալէն, Համիլթընէն, Աէնթ Գաթրինգէն եւ այլ վայրերէ Օթթաուա ժամանած հայորդիներու:

Ոգեկոչման եւ պահանջատիրութեան հանդիսութիւնը կազմակերպած էր Գանատայի Հայ Դատի յանձնախումբը, ընկերակցութեամբ Գանատայի երիտասարդական Միութեան, որ այս տարի բացառապէս տեղի ունեցաւ Օթթաուայի Թրքաքան դեսպանատան դիմաց, իբրեւ ցասման ու պոռթկումի խորհրդանիշ: Յոյցի ընթացքին, ՀՅԴ Գանատայի երիտասարդական միութեան (ԳեՄ), ՀՅԴ «Արմէն Գարօ» Ուսանողական միութեան, Պատանեկան Միութեան եւ Հ.Մ.Ը.Մ.–ի երիտասարդներն ու պատանիները անգամ մը եւս ցոյց տուին, որ յանձնառու են պահանջատիրական երթը շարունակելու իրենց կողմին, տէր կանգնելու Հայաստանի ու Արցախի անվտանգութեան եւ «Զարթի՛ր Լաօ» նշանաբանով ընդդիմանալու Հայաստանի գործող իշխանութեանց ձախաւեր քաղաքականութեան: Միւս կողմէն, սակաւաթիւ թուրք եւ ազերի ցուցարարներ հակահայ պատասխաններով նախաձեռնած էին հակացոյց եւ կը վանկարկէին հակահայ լոգունքներ:

Հանդիսութիւնը սկիզբ առաւ Գանատայի, Հայաստանի եւ Արցախի օրհներգերով:

Յանուն Հ.Յ.Դ Բիւրոյի խօսք առաւ Բիւրոյի ներկայացուցիչ ընկ. Յակոբ Տէր ինչատուրեանը: Ան նշեց, որ Յեղասպանութեան ոգեկոչումի ու պահանջատիրութեան այս ցոյցը վստահաբար մեզի մտածել կու տայ մեր հողային, մտաւորական, մշակութային եւ մարդկային ահաւոր կորուստներու մասին, միաժամանակ՝ մոխիրներէն յառնող Հայ ժողովուրդի ապրելու կամքին, ստեղծագործելու եւ նահատակաց ուղիով անվհատ աշխատելու, պահանջելու եւ պայքարելու մարտունակութեան մասին: Ան բռնկեց կերպով դատապարտեց Թուրքիոյ ուրացման քաղաքականութիւնը եւ յայտնեց, թէ նման ուրացումներ կրնան առաջնորդել այլ ցեղասպանութիւններու գործադրման ու անպատժելիութեան: Ապա նշեց, որ Հայ ժողովուրդը ամէնուր ոտքի է այսօր, ի հեճուկա տառապանքներու, խարդաւանանքներու ու դաւերու: Մեր պատմութեան մէջ բազում պարտութիւններ ունեցած ենք, բայց իւրաքանչիւր պարտութիւն մղած է մեզ միանալու ազգային գափարախօսութեան շուրջ եւ նոր զարթոնքով կերտելու նոր յաղթանակներ: Աւարտին, ընկ. Յակոբ կոչ ուղղեց Հայ ժողովուրդին արթննալու իր թմբիւրէն, մէկըի նետելու յուսահատութեան ու բարոյալքման ալիքները եւ լծուելու հայրենիքի փրկութեան գործին:

Խօսք առաւ Գանատայի Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ ընկ. Մհեր Գարազաչեան: Ան նշեց, որ այսօրուան ցոյցը երկու նպատակ կը հետապնդէ. առաջին՝ ոգեկոչում մեր մէկ ու կէս միլիոն զոհերուն, եւ երկրորդ՝ հայրենիքի

փրկութեան ուխտի վերանորոգում: «Այսօր ճակատագրական պահու առջեւ կանգնած ենք, բոլորիս համբերութիւնը հատած է եւ կը սպասենք բեկումնային պահին: Ծակատագրական պահ է, որովհետեւ ցեղասպանութեան հեղինակները 107 տարիներ ետք, անգամ մը եւ կազմակերպեցին ցեղասպանութիւն եւ այսօր, պաշտօնական Երեւանն ու Անգարան իրար կ'արձագանգեն խաղաղութեան դարաշրջանի փուլ ու սին խոստումներով», շեշտեց ընկ. Գարազաչեան, կոչ ուղղելով աշխարհասփիւռ հայութեան՝ թեւ–թիկունք կանգնելու Հայաստանին ու Արցախին, դառնալու մեր նորօրեայ ազատագրական պայքարի արտաքին պարիսպները եւ կերտելու նոր ժամանակներու անկախութիւնն ու ինքնիշխանութիւնը: Ան հաստատեց, որ Հայ ժողովուրդը թոյլ պիտի չի տայ «նշաձողերու իջեցման», ոչ ալ «խաղաղութեան դարաշրջան»ի սնաբարոյ քաղաքականութեան կիրառման ջանքերուն, այլ՝ միահամուռ ջանքերով սատար պիտի հանդիսանանք Արցախի ու Հայաստանի մեր ազատատենչ հայրենակիցներուն եւ միասնական ոգիով աշխատելու ի խնդիր հայութեան գերագոյն շահերուն:

Այնուհետեւ, հերթականութեամբ խօսք առին ՀՅԴ «Արմէն Գարօ» Ուսանողական միութեան ներկայացուցիչ ընկ. Ռիթա Մուրատեանը, որոնք յանուն Հայ երիտասարդութեան վերանորոգեցին իրենց յանձնառութիւնը, նոր աւելնով ու ուժով շարունակելու պահանջատիրական արդար դատի պայքարն ու Հայաստանի ու Արցախի բարգաւաճման ու հզօրացման ուղղուած աշխատանքները:

Եզրափակիչ պատգամով հանդէս եկաւ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Բաբգէն Արքեպիսկոպոս Չարեան: Ան նշեց, որ աշխարհի որ անկիւնն ալ գտնուինք՝ պէտք է յիշատակենք, վերակոչենք եւ վերանորոգենք Ապրիլեան նահատակաց հաւատարմութեան մեր ուխտը, այսօր եւ ամէն օր, հաւաքաբար եւ ազգովին, առաւել քան մէկ ու կէս միլիոն անշիրիմ մեր սրբադասեալ նահատակներու յիշատակին առջեւ, հայութեան եւ հայրենիքին հանդէպ հաւատարմութեան մեր վճռականութիւնը վերամկրտենք ու վերահաստատենք, մինչեւ արդարութեան վերադարձը՝ արդարութեան պահանջատէրերուն: Նահատակներու ժառանգորդներուս պարտքն է՝ ըսաւ Սրբազանը, անոնց յիշատակը, հաւատքի խաթը անմար պահել մեր եւ նոր սերունդներու սրտին ու կեանքին մէջ: Անոնց նահատակութիւնը եւ կտակը արժեցուցած եւ իրականուցած կ'ըլլանք, երբ նահատակներու հոգին մեր մէջ ապրեցնենք եւ միասնական ճիգերով անոնց անաւարտ երազները իրականացնենք:

Հանդիսութեան ընթացքին Նուշիկ Մխճեան ասմունքեց «Ապրում եմ եւ ոչ վերապրում» բանաստեղծութիւնը, Արիանէ Թասլաքեան ընթերցեց Աւետիս Ահարոնեանի «Յարգանք քեզ» խորագրով կտորը, իսկ «Դրօ–Գետաչէն» մասնաճիւղի պատանիները ասմունքեցին Պարոյր Սեւակի «Նրանք Ընկան» բանաստեղծութիւնը: Աւարտին, հայրենասիրական երգերով հանդէս եկաւ Սադօ Թաշճեան:



Փաշինեանի Կործանումներու Ծարանը. Այսօր` Արցախը, Վաղը` Հայաստանը

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան 13 Ապրիլ 2022ին Հայաստանի խորհրդարանին մէջ հան–դէս եկաւ չափազանց երկար եւ անիմաստ ելոյթով, որ կը վերաբերէր իր կառավարութեան 2021ի ձախողու–թիւններուն եւ ձեռքբերումներուն։

2020ի արցախեան աղէտալի պատերազմէն ի վեր, ես բազմիցս ըսած եմ, որ վարչապետը չափազանց ապաշնորհ է Հայաստանը կառավարելու համար։ Ան պատճառ դարձաւ Արցախի մեծ մասին եւ հազարաւոր հայ երիտասարդներու կորուստին։ Իբրեւ պարտուած ու հոգեբանօրէն ջախջախուած ղեկավար՝ ան ի վիճակի չէ վերականգնելու երկրին հասցուած վնասը։ Օրէ օր վի–ճակը աւելի կը վատանայ. հիմնականին մէջ, Արցախը կորսնցուցած ենք, իսկ յաջորդը՝ Հայաստանն է։

Սակայն Փաշինեան կը մերժէ հրաժարական տալ՝ կառչած մնալով իր աթոռին եւ հաստատելով միանձն–եայ իշխանութիւն։ Հեգնականօրէն, չորս տարի առաջ, երբ տիրապետեց կառավարութեան՝ ան յայտարարեց, որ իշխանութիւնը կը պատկանի ժողովուրդին։

13 Ապրիլ 2022ի իր ելոյթին մէջ, Փաշինեան ըսաւ. «Մենք ունեցանք լրջագոյն ձախողութիւններ եւ լրջագոյն ձեռքբերումներ։ Նախ պիտի խօսիմ ձեռքբե–րումներու մասին, յաջորդիւ կեդրոնանալով ձախողու–թիւններու վրայ, բայց ոչ այնքան կամ ոչ միայն գա–նոնք արձանագրելու, այլեւ Ազգային ժողովի բարձր ամպիոնէն գտնուելու պատեհութիւնը օգտագործելով՝ հանրութեան առաջ ինքնախոստովանութիւններ ընե–լու, տեղի ունեցած պատերազմի եւ պարտութեան պատճառահետեւանքային կապերը լուսաբանելու եւ կարելի լուծումներու մասին խօսակցութիւն յարուցելու համար»։

Իշխանութեան բարձրաստիճան տարբեր պաշտօն–եաներ վերջերս յայտարարեցին, որ Արցախ այլեւս տա–րածքային խնդիր չէ, այլ՝ մարդկային իրաւունքներու, ինչ որ կը նշանակէ, որ Հայաստան կը հրաժարի Արցա–խի անկախութեան կամ ինքնորոշման իր վաղեմի պա–հանջէն՝ փոխարէնը ընտրելով հայերու մշակութային եւ կրօնական իրաւունքներու պաշտպանութիւնը Ար–ցախի մէջ՝ Ատրպէյճանի տիրապետութեան տակ։

Քանի որ Փաշինեանի ծրագիրն է՝ Արցախի մնա–ցած մասը եւս յանձնել Ատրպէյճանի, ապա ան ինչո՞ւ կը պարծենայ, որ «2020ի Նոյեմբերէն, ամիս եւ ինչո՞ւ կը աւարար, (Հայաստանի) կառավարութիւնը Արցախի մէջ իրականացուցած է 136 միլիառ դրամի (մօտաւորապէս 272 միլիոն տոլար) ծրագիրներ»։ Հայաստան, իրակա–նութեան մէջ, նիւթապէս կը հովանաւորէ Ատրպէյճանի ենթակառոյցները Արցախի մէջ, քանի որ Ատրպէյճանի կառավարութիւնը երեքուկէս տարի անց կամ աւելի քիչ, ահա՛ կը տիրանայ այդ տարածքին։

Փաշինեան խոստովանեցաւ, որ 2021ին, բացասա–կանը գերազանցած է դրականին։ Ան յայտարարեց, որ «ի սկզբանէ ընդունած եմ իմ մեղքն ու պատասխանա–

տուութիւնը թէ՛ պատերազմի, թէ՛ պարտութեան հա–մար»։ Բայց յետոյ հակասեց ինքզինք՝ ըսելով. «Ձեմ ընդունած եւ չեմ ընդունիր 9 Նոյեմբեր 2020էն ետք ընդդիմութեան կողմէ ինծի ուղղուած մեղադրանքնե–րը՝ հող յանձնելու, հետեւաբար նաեւ դաւաճանութեան մէջ»։ Ան խոստովանեցաւ, որ իր ըսածը «կրնայ անհե–թեթ թուիլ, որ կ’ընդունիս մեղքը, բայց չես ընդունիր մեղադրանքը»։

Իր խոստովանութիւնը աւելի շփոթեցնող դարձ–նելով՝ Փաշինեան աւելցուց. «Վերջերս տուած հարցազ–րոյցներէս մէկուն մէջ ակնարկած էի, որ եթէ կ’ուզեն առարկայական մեղադրանք վերագրել ինծի, պէտք է որ գիս մեղադրեն ոչ թէ հողեր յանձնելու, այլ՝ հողեր չյանձնելու մէջ։ Եւ ես հիմա, այո, կ’ուզեմ խոստովա–նիլ, որ կրնայ ըլլալ որ մեղաւոր եմ այս իմաստով։ Մե–ղաւոր եմ, որ 2018ին, 2019ին մեր հանրութեան առջեւ չեմ կեցած եւ չեմ բարձրաձայնած, որ մեր բոլոր, կը կրկնեմ բոլոր՝ հեռու եւ մօտիկ բարեկամները մեզմէ կ’ակնկալեն, որ մենք այս կամ այն պատկերացումով Ատրպէյճանին յանձնենք եօթը յայտնի շրջանները եւ իջեցնենք Արցախի կարգավիճակին համար մեր սահմա–նած նշաձողը։ Մեղաւոր եմ, որ մեր ժողովուրդին չեմ ըսած, որ միջազգային հանրութիւնը հաստատօրէն կը ճանչնայ Ատրպէյճանի տարածքային ամբողջականու–թիւնը, կ’ակնկալէ, որ մենք ալ ճանչնանք, կ’ակնկալէ նաեւ, որ Ղարաբաղէն հեռացած ատրպէյճանցիները լիարժէքօրէն գրաւուած ըլլան Լեռնային Ղարաբաղի ապագայի որոշման ու կառավարման հարցերուն մէջ»։

Վերոնշեալ պարբերութեան մէջ Փաշինեան ըն–դունեց իր մեղքը Արցախը կորսնցնելու գծով, սակայն տարօրինակ կերպով խուսափեցաւ ընդունելէ իր գործո–ղութիւններուն հետեւանքները։ Ան նաեւ բազմաթիւ անգամ մեղքը բարդած է միջազգային հանրութեան ճնշումներուն վրայ։ Ճիշդ չէ, որ միջազգային հանրու–թիւնը կը պահանջէր, որ հայերը զիջէին Արցախը, բայց եթէ նոյնիսկ պահանջէին, պէտք է որ Փաշինեան աւելի շատ մտահոգուէր Հայաստանի ազգային շահերով, այլ ոչ թէ դուրսի առաջարկներով։ Միայն թոյլ ղեկավարն է, որ կը կքի երրորդ կողմերու ճնշման տակ եւ չի պաշտպաներ իր ժողովուրդին իրաւունքները։

Փաշինեան խոստովանեցաւ. «Եւ այսպէս չընելն է իմ իրական մեղքը եւ մեղադրանքի այս ձեւակերպու–մը երբեք ալ իրավիճակը մեղմացնելու փորձ չէ, այլ՝ ընդհակառակն, այդ ընելով աւելի եւս կը սրեմ իրավի–ճակը, որովհետեւ յանձնելով (Արցախի հողերը), թերեւս փրկէի հազարաւոր կեանքեր, բայց չյանձնելով, փաս–տօրէն, հազարաւոր զոհերու յանգեցուցած որոշումնե–րու հեղինակը դարձայ»։ Որպէս Հայաստանի վարչա–պետ՝ ան իրաւունք չունէր յանձնելու Արցախի այն տարածքները, որոնք իր իրաւասութեան տակ չէին։

Փաշինեան կը պատրաստուի ամբողջութեամբ յանձնել Արցախը՝ յայտարարելով, որ կը ցանկայ խա–

ղաղութեան պայմանագիր կնքել Ատրպէյճանի հետ եւ ճանչնալ անոր տարածքային ամբողջականութիւնը։ Ան պատճառաբանեց, թէ «միջազգային հանրութիւնը մեզի յստակ կ’ըսէ. ըլլալ աշխարհի միակ երկիրը, որ չի ճանչնար Ատրպէյճանի տարածքային ամբողջականու–թիւնը, մեծ վտանգ է ոչ միայն Արցախի, այլեւ Հայաս–տանի համար։ Այսօր միջազգային հանրութիւնը մեզի դարձեալ կ’ըսէ՝ քիչ մը իջեցուցէք Լեռնային Ղարա–բաղի կարգավիճակի հարցով ձեր նշաձողը եւ միջազ–գային մեծ ամրապնդում կ’ապահովէք Հայաստանի եւ Արցախի չուրջ։ Հակառակ պարագային, կ’ըսէ միջազ–գային հանրութիւնը, կը խնդրենք մեր վրայ յոյս չդնել, ոչ թէ այն պատճառով, որ մենք չենք ուզեր օգնել ձե–զի, այլ այն պատճառով, որ մենք չենք կրնար օգնել ձեզի»։

Ի դէպ, երբ Փաշինեան ըսաւ, որ Հայաստան չէ ճանչցած Ատրպէյճանի տարածքային ամբողջականու–թիւնը, ան հակասեց ինքզինք՝ կեղծօրէն պնդելով, որ 1992ին, Հայաստան ճանչցած է Ատրպէյճանի տարած–քային ամբողջականութիւնը։ Անհիմն յայտարարու–թիւն է նաեւ անոր պնդումը, թէ միջազգային հանրու–թիւնը զգուշացուցած է, որ չի կրնար օգնել Հայաստա–նին, եթէ վերջինս զիջումներու չերթայ Արցախի հար–ցով։ Իսկ միջազգային հանրութիւնը ե՞րբ մատը մատին տուած է Հայաստանին օգնելու համար։ Փաշինեան ուղղակի կ’օգտագործէ այս պատրուակը, հետագային զիջումներ ընելու համար Ատրպէյճանի։ Ան ի վիճակի չէ պաշտպանելու Հայաստանի սահմանները, ինչպէս տեսանք 12 Մայիս 2021ին, Ատրպէյճանի կողմէ Հա–յաստանի սահմանին եղած ոտնձգութեան ժամանակ։ Աւելին, Փաշինեան կեղծօրէն մեղադրեց իր քաղաքա–կան հակառակորդները՝ ատրպէյճանական այդ ներ–խուժման համար։ Ան նաեւ մեղադրեց Խուսիոյ գլխա–ւորած ՀԱՊԿը (Հաւաքական ապահովութեան պայմա–նագրիի կազմակերպութիւն)՝ ի պաշտպանութիւն Հա–յաստանի կեցուածք չցուցաբերելուն համար, թէեւ ներ–կայիս ինքն է ՀԱՊԿի նախագահը։

Խորհրդարանին մէջ, Փաշինեանի պարտուողա–կան արտայայտութիւնները խստօրէն դատապարտեց ոչ միայն քաղաքական ընդդիմութիւնը, այլեւ սովորա–բար տեղի տուող Արցախի ղեկավարները։

Պէտք է ամէն ջանք ի գործ դնել՝ Փաշինեանէն շուտափոյթ ազատելու համար, քանի որ ան կը մերժէ հրաժարական տալ՝ նախընտրելով իր աթոռը, այլ ոչ թէ Հայաստանի շահը։ Հակառակ պարագային, Արցախէն ետք կարգը կու գայ Հայաստանին։

Յարութ Սասունեան
Արեւելահայերէնի թարգմանեց՝
Ռուզաննա Աւագեան
Արեւմտահայերէնի վերածեց՝ Սեդա Գրիգորեան

Հայ Դատ... Սկիզբը էջ 1

կան ուղեցոյցն է, որ հասանելի պիտի ըլլայ Քէպէզի միջնակարգ դպրոցներու աւելի քան 343,000 աշակերտ–ներու եւ 800 կրթական հաստատութիւններու։

Երկրեզու այս ուղեցոյցը կը սահմանէ ցեղասպանու–թեան յանցագործութիւններու դրոյթները, մասնագիտա–կանօրէն կը բացատրէ ցեղասպանութեան տարբեր փուլե–րը, որոնք պատմականօրէն պատճառ դարձած են նմանօ–րինակ յանցագործութիւններու։ Ուղեցոյցը նաեւ լոյս կը սփռէ ՄԱԿ–ի եւ Գանատայի կողմէ ճանչցուած ինը այլ ցեղասպանութիւններու մանրակրկիտ դէպքերուն, ինչպի–սիք՝ Գանատայի բնիկ հնդկներու մշակութային ցեղաս–պանութիւն (1876–1993), Հերերոյի եւ Նամայի ցեղաս–պանութիւն (1904–1908) Հայոց ցեղասպանութիւն (1915–1923), Ուքրանական Հոլոստոմորը–Սովասպանութիւն (1932–1933), Ռոման գնչուներու եւ Սինտիներու ցեղաս–պանութիւն (1935–1945), Հրեաներու Ողջակիզում (1939–1945), Գամպոտիայի ցեղասպանութիւն (1975–1979), Պոսնիայի ցեղասպանութիւն (1992–1995) եւ Ռուանտայի թութիներու ցեղասպանութիւն (1994)։

Ուղեցոյցի հիմնական նպատակն է կանխել ապա–գայ ցեղասպանութիւնները, ուսուցիչներուն եւ աշա–կերտներուն տրամադրելով անհրաժեշտ գիտելիքներն ու հմտութիւնները՝ ստեղծելու արժէքներու եւ վերաբեր–մունքի համակարգ մը, որ պիտի ձեւաւորէ հաւաքական

ըմբռնում ցեղասպանութեանց կանխարգելման վերա–բերեալ։

Այս ուղեցոյցին հրատարակութիւնը՝ Ցեղասպա–նութեան Կրթական Հիմնադրամին եւ գործակից կազ–մակերպութիւններուն համատեղ ջանքերուն արգասիքը կը հանդիսանայ, որոնք տարիներ շարունակ անխոնջօ–րէն աշխատեցան այս կարեւոր նախաձեռնութեան հա–մար։

«Կարեւոր է աշխատիլ ցեղասպանութենէն տու–ժած բոլոր համայնքներուն հետ, որպէսզի կարենանք զուգահեռներ գտնել իրադարձութիւններուն միջեւ, հասկնալ ցեղասպանական դէպքերուն նախորդող փու–լերը, ինչպէս նաեւ ընդգծել պատասխանատուներու ժխտման քաղաքականութիւնը։ Ցեղասպանութիւննե–րը, անկախ ժամանակի ու վայրի հանգամանքներէն, միշտ ալ նմանութիւններ ունին», հաստատեց Ցեղաս–պանութեան Կրթական Հիմնադրամի գործադիր խոր–հուրդի մօտ Գանատայի Հայ Դատի յանձնախումբի ներկայացուցիչ Հրակ Չինչինեանը։

Գանատայի ու Քէպէզի Հայ Դատի յանձնախումբ–բերը կը գնահատեն Ցեղասպանութեան Կրթական Հիմ–նադրամի ու անոր ղեկավարներուն, ինչպէս նաեւ Հայ Դատի յանձնախումբի ներկայացուցիչներուն՝ Փրոֆ. Լալէ Մանճիկեանի եւ Հրակ Չինչինեանի անխոնջ աշ–խատանքը, նաեւ կը գնահատեն փրոֆեսորներ՝ Ալան Ուայթհորնի, Իզապէլ Գաբրիէլեան–Չրըչլի եւ Սթէյսի

Բարեւար... Սկիզբը էջ 3

քի խօսքին մէջ գնահատեց Տիկին Կէօնճեանը, իր առա–տաձեռն նուիրաբերումին ու թանկագին աջակցութեան համար՝ ի խնդիր մեր գաղութի ու ընդհանրապէս Կի–րակնօրեայ Դպրոցներու յառաջդիմութեան ու բարգա–ւաճման։ Իր խօսքին մէջ Առաջնորդ Սրբազանը կը շեշտէր՝ «Նուիրաբերումը առաքինութիւն է, երբ մա–նաւանդ մեր սրտէն, հոգիէն, ժամանակէն եւ կամ նիւ–թականէն կու տանք։ Նուիրաբերումը յատուկ արժէք ունի, մանաւանդ երբ պիտի ծառայէ վեհ նպատակի մը, այս պարագային՝ քրիստոնէական դաստիարակութիւն ջամբելու, սերունդներու նկարագրի կերտման եւ ի մասնաւորի հաւատքի արթնութեան նպաստող։ Կը գնահատենք Ազգային Բարերար Տիկին Շաքէ Կէօնճեանը, իր առատաձեռն նուիրատուութեանց համար, որ կը կատարէ՝ եկեղեցւոյ, համայնքին, դպրոցին, հայ կեդրոնին եւ Ազգային Առաջնորդարանիս։ Աստուած օրհնէ իր ընտանիքը եւ իրեն ու իր հարազատներուն առողջ եւ արեւշատ կեանք պարգեւէ»։

ԴԻԻՎԱՆ
ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ



ՈՒՍԱԴՈՐԻՉ

ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՁ

ԻՆՉՊԻՍԻՆ Է ԱՍՏՈՒԾՈՅ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Աստուած սոսկ բանականություն չէ, այլ՝ Անձ մը, որ աշխարհին ու մարդուն հետ կը հաղորդակցի: Իբրև Անձ, անպայմանօրէն կը ներկայանայ նկարագրով մը, որուն մասին քանի մը հաստատումներ կարելի է ընել, դարձեալ քաղելով իր ինքնայայտութենէն, ինչպէս նաև իրեն տրուած ստորոգելիներէն և իր գործերէն, որոնք կը բացայայտեն այդ նկարագիրը:

ա.- Անիկա սուրբ է (Յես 24.19: Ա.Թգ 6.20: Սղ 99.9: Ես 5.16): Սրբութիւնը Աստուծոյ մէկ յատկանիշը չէ՝ պարզապէս, այլ՝ Աստուծոյ բնութեան իսկութիւնն է: Աստուած սուրբ է՝ ո՛չ թէ ուրիշ սուրբ բաներու կարգին, այլ՝ միա՝ կ'Սուրբն է (Ա.Թգ 2.2: Յոր 6.10: Առ 9.10: Ես 40.25, 43.15: Ովս 11.9: Ամբ 1.12), հեռու և անջատ ըլլալով ամէն անսրբութենէ:

Աստուած իր սրբութեամբ կը սրբէ ամէն բան՝ որ իրեն կը մօտենայ կամ կ'ընծայուի: Եւ իր ծրագիրն է՝ իր սրբութեան համապատասխան «սուրբ ազգ» մը ունենալ իբրև իրեն սեփական ժողովուրդ (Ելք 19.6: Դւ 11.44-45, 19.2, 20.26: Բ.Օր 7.6: Եզ 36.22-28): Այդպէս ալ, երբեմն կը կոչուի «Իսրայէլի Սուրբը» (Դ.Թգ 19.22: Սղ 71.22, 89.18: Ես 5.19, 41.20, 45.11), կ'ընէ...: Իր ամենասուրբ էութեամբ՝ Աստուած կ'ատէ մեղքն ու չարիքը, և կը սիրէ ինչ որ լաւ է ու բարի:

բ.- Անիկա մեծ ու փառաւոր է (Ելք 15.11: Սղ 145.5: Դն 2.45): Սոսկական ածական մը չէ՝ Աստուծոյ տրուած «մեծ» ստորոգելին: Անիկա անցեալի բազմաստուածեան ընկերութեան և մտածողութեան դիմաց ցոյց կու տայ Աստուծոյ ճշմարտութիւնը՝ սուտանուն չաստուածներուն վրայ, և իբրև Արարիչ անոր անհամեմատելի տարբերութիւնը շնչաւոր թէ անշունչ արարածներէն (Բ.Մն 2.5: Սղ 86.10, 95.3): Կը բաւէ կարդալ սա զօրեղ հաստատումը. *«Ձեր Տէր Աստուածը աստուածներուն Աստուածն է և տէրերուն Տէրը: Մեծ, հզօր և ահեղ Աստուածն է, որ աշտութիւն չ'ըներ, և կաշառք չ'առներ»* (Բ.Օր 10.17: Հմնր Նե 9.32): Գալով ահեղութեան, ահեղ ըլլալը վախ պատճառել չի հասկցուիր, այլ՝ արտայայտիչն է այն հզօրութեան ու փառաւորութեան, որուն դիմաց թէ՛ հոգեղէն էակները և թէ՛ հողեղէն մարդը միայն պատկառանք կրնան զգալ:

գ.- Անիկա արդար և ուղիղ է (Բ.Օր 32.4: Եզր 9.15: Սղ 92.15): *«Տէրը արդար է իր բոլոր ճամբաներուն մէջ, ողորմած է իր բոլոր գործերուն մէջ»* (Սղ 145.17): Մինչ աշխարհի մտածողութեան մէջ մեծութիւնն ու հզօրութիւնը կապուած են զեղծումի և անարդարութեան հետ, Աստուծոյ անսահման մեծութիւնն ու հզօրութիւնը կը շողան իր սքանչելի արդարութեան և ուղղութեան մէջ: Արդար է իր վերաբերումով ու իրաքանչիւրին գործերուն պաշտպանը և փրկիչն է ան (Սղ 4.1: Ես 45.21), մեղաւորներուն ապաւէնը և դատարարը (Սղ 25.8), և իբրև այդպիսին փառաբանուած բոլորէն (Սղ 92.15: Ես 24.16): Միւս կողմէ, անարդարներուն ու չարերուն վերապահուած պատիժը Աստուծոյ արդարութեան ցուցանիշն են և պիտի ըլլան (Սղ 7.9: Հմմտ Բ.Թս 1.5-7):

դ.- Անիկա հաւատարիմ և ճշմարիտ է (Սղ 25.10, 33.4, 36.5, 100.5, 115.1, 146.6: Եր 10.10: Ողբ 3.22): Երբ Աստուած ուզեց ինքզինք Մովսէսին յայտնել, անոր առջևէն անցաւ և յայտարարեց. *«Ես Տէրն եմ, ՏէՐԸ, գթասիրտ և ողորմած Աստուածը, որ համբերաւոր եմ և անսահմանօրէն ողորմած ու հաւատարիմ»* (Ելք 34.6: Սղ 86.15): Աստուծոյ անփոփոխելի յատկանիշն է, իր էութեան անփոփոխելիութեան պէս: Որովհետև ինք անփոփոխելի է, անփոփոխելի են նաև իր խօսքն ու վարմունքը, և Աստուած հաւատարիմ է իր արդարութեան, իր սիրոյն, իր ընտրութեան, իր խոստումներուն, իր ծրագրին, իր ուխտին (Բ.Օր 7.9, 32.4: Սղ 89.2: Ես 25.1, 49.7: Ովս 2.19): Անիկա հրաւեր է մարդուն՝ կատարեալ վստահութեամբ յանձնուելու իր Արարիչին խոստումներուն, անոր հայրական սիրոյն և առաջնորդութեան (Բ.Թգ 7.28: Բ.Մն 6.15: Սղ 91.4, 138.8): *«Օրհնեալ ըլլայ Տէրը, որ իր բոլոր խոստումներուն համաձայն հանգիստ փութաւ իր ժողովուրդին, և իր ծառային՝ Մովսէսի միջոցաւ փութած բարի խոստումներէն ունէ մէկը անկարար չ'մնաց»* (Գ.Թգ 8.56):

ե.- Անիկա գթած ու ողորմած է (Սղ 86.25, 103.8, 111.4, 116.5, 145.8-9: Յվս 4.2): Այդպէս յայտնեց ան ինքզինք, երբ Մովսէս փափաքեցաւ Աստուծոյ դէմքը տեսնել (Ելք 34.6-7): Հետևեալբար, կարելի է ըսել՝ թէ Աստուծոյ ճշմարիտ էութիւնն է ասիկա ինչպէս «հաւատարիմ և ճշմարիտ» ստորոգելիներուն համար ըսուեցաւ: Իր ժողովուրդին հանդէպ իր անսահման գթութիւնն ու ողորմութիւնը այնքան լաւ կ'արտայայտէ Ք.Ա. 8-րդ դարու ժամանակագիր մարգարէն, երբ կը գրէ. *«...Բայց Տէրը Աբրահամին, Իսահակին և Յակոբին հետ կ'ընթած իր ուխտին համար անոնց (= Իսրայէլի ժողովուրդին) ողորմեցաւ, գթաց և օգնութեան հասաւ անոնց. չուզեց զանոնք կորսնցնել, և փակաւ իր երեսէն չ'զրկեց զանոնք»* (Դ.Թգ 13.23: Հմնր Եզր 9.8: Նե 9.17 և 31): Նոյնն է իր վերաբերումը ամէն անհատի հանդէպ, որ Աստուծոյ կը դառնայ և անոր գթութեան կ'ապաւինի (Բ.Մն 30.9: Ես 30.18: Յվ 2.13):

զ.- Անիկա բարի է (Բ.Մն 5.13: Սղ 34.8, 73.1, 119.68): Բարութեան այժմեան հասկացողութիւնը միշտ դրական չէ անպայման: Բայց պէտք է միշտ յիշել, որ Աստուածաշնչական հասկացողութեամբ՝ բարութիւնը կրաւորական յատկանիշ մը չէ, այլ աւելի՝ ներգործական, բարերար, ստեղծագործող: Աստուծոյ բարութիւնը նաև իր քաղցր և ներողամիտ վերաբերումն է մարդուն հանդէպ, հակառակ մարդուն ընթացքին և Աստուծոյ հանդէպ կեցուածքին (Ելք 33.19: Բ.Մն 30.18: Սղ 25.7-8, 52.9, 145.7), և իր պարզեւած վերանորոգութիւնը կամ վերակենդանութիւնն է (Եր 33.10-11: Ողբ 3.25: Նհ 1.7):

է.- Անիկա համբերատար է (Թւ 14.18): Անիկա մէկ այլ անունն է գթութեան և ողորմութեան, և առհասարակ անոնցմէ անբաժան կը ներկայանայ (հմմտ Ելք 34.6), կ'ընէ: Եզիպտոսէն ելքէն ետք անապատային թափառումներու շրջանը վերապատմող 78-րդ Սաղմոսը հետևեալ ձևով կը բնութագրէ տևապէս տրտնջացող և սրտովին Աստուծոյ անհնազանդ ժողովուրդին հանդէպ Աստուծոյ վերաբերումը. *«Իրենց սիրտը ուղիղ չէր Աստուծոյ առջև, և հաւատարիմ չէին անոր ուխտին, բայց Ինք ողորմած ըլլալով՝ կը զսպէր, և իր սրտին ամբողջ զայրոյթը չէր թափեր»* (Սղ 78.37-38): Ատիկա պատկերն է ո՛չ միայն 40 տարիներու, այլ՝ Իսրայէլի ամբողջ կեանքին (Եր 11.7: Ովս 11.9: Մք 7.18): Առանց Տիրոջ համբերատարութեան՝ ո՛չ ոք պիտի կարենար վայրկեան մ'իսկ ապրիլ. միայն այդ համբերատարութիւնն է, որ մարդուս առիթ կու տայ ներում գտնելու Աստուծոյ կողմէ (Սղ 103.8-10): Բայց նոյն այդ համբերատարութիւնը առաւել խիստ դատաստանի պատճառ պիտի ըլլայ բոլոր անզիղջներուն համար (Նհ 1.3):



ՌԻՍԱԴՈՐԻՉ

ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ

ՅԻՆՈՒՆՔ, ՅԻՍՈՒՆՔ ԿԱՄ ՅԻՆԱՆՑ ՕՐԵՐ

Ինչպէս որ Զատիկէն առաջ ունինք 50 օրերու տրտմութեան և ապաշխարանքի շրջան մը՝ մենք մեզ նախապատրաստելու Ս. Յարութեան մեծ տօնին, այնպէս ալ ունինք Զատիկէն յետոյ 50 օրերու հոգևոր ուրախութեան շրջան մը, որ շարունակութիւնը և երկարաձգումն է Ս. Յարութեան խորհուրդին: Ուստի, Զատիկէն մինչև Հոգեգալուստ 50 օրերու այս ժամանակամիջոցը կը կոչուի Յինունք, Յիսունք կամ Յինանց օրեր:

Այդ օրերը ամբողջովին Տէրունի տօներ են. առաջին քառասուն օրերը՝ ի պատիւ **Յիսուսի Յարութեան** (որովհետև Յիսուս իր յարութենէն ետք 40 օրեր իր աշակերտներուն երևցաւ, տէն Գործք 1.3), վերջին իննը օրերը՝ ի պատիւ **Յիսուսի Համբարձման**, իսկ յիսուներորդ օրը՝ **Սուրբ Հոգիի գալստեան**:

Մեծ Պահոց Կիրակիներուն պէս, Յինանց եօթը Կիրակիներէն իւրաքանչիւրը ևս կը կրէ լուսաւոր անուն մը, օրուան խոհուրդէն թելադրուած, կոչուելով՝ Գունագեղ Կիրակիներ:

1. Նոր Կիրակի, Կրկնագատիկ կամ Սպիտակ Կիրակի: Այս Կիրակին, որ իր մէջ կը բովանդակէ մարդկային կեանքի վերանորոգութեան խորհուրդը, կը կոչուի՝

Ա) Նոր, որովհետև Զատիկը ըլլալով գերազանց Կիրակին՝ անոր յաջորդող Կիրակին կ'ըլլայ սկիզբը տարուան բոլոր Կիրակիներուն:

Բ) Կրկնագատիկ, որովհետև այս Կիրակիին կը կրկնուին Զատկական ուրախութիւնները և կը շարունակուի հոգևոր նոյն մթնոլորտը:

Գ) Սպիտակ, որովհետև ականարկութիւնն է այն սպիտակ մաքրութեան, որ Եկեղեցիին մէջ կը տիրապետէ Զատկական շրջանին, նկատի առնելով՝ մկրտոտողները, հաղորդոտողները և հոգևորապէս մաքրոտողները:

2. Աշխարհամատրան կամ Կանաչ Կիրակի:

Ա) Քրիստոնէական Ընդհանրական Եկեղեցոյ փառաբանութեան ու գովերգութեան տօնն է: Այս օրը կը յիշուի Եկեղեցոյ Նաւակատիքը, այսինքն՝ սկզբնաւորութիւնը, երբ Քրիստոս իր յարութենէն ետք Վերնատան մէջ հաւաքուած իր աշակերտներուն երևցաւ, և նոյն Վերնատան մէջ էր որ անոնք հետագային Ս. Հոգին ստացան: Այդ Վերնատունը դարձաւ՝ աշխարհի առաջին Եկեղեցին, առաջին Աշխարհամատուորը:

Բ) Կանաչ կը կոչուի ժողովրդային անուանումով, որովհետև գարնան օրերուն դաշտերը կանաչ կ'ըլլան: Նաև կը խորհրդանշէ քրիստոնեայ հաւատացեալին Քրիստոսով նորոգուած ըլլալու, նոր մարդ դառնալու յատկութիւնը, մշտադալարութիւնը, կեանքի յարութիւնը և անոր մշտնջենական գոյութիւնը:

3. Կարմիր Կիրակի: Քրիստոնէական քաջութեան ու յաղթանակի օր է, առաքիներթիւններով ու ազնւութեամբ զինուելու օր:

Ա) Կարմիր գոյնը առհասարակ խորհրդանշէ է պայքարի: Քրիստոնէական մեր կեանքն ալ պայքար է չարին ու անոր ուժերուն և անոնց բոլոր տեսակի յարձակումներուն դէմ, պաշտպանելու համար աստուածատուր մեր կեանքը՝ բարոյական և հոգևոր մարզերուն մէջ:

Բ) Կարմիրը, ժողովրդային անուանումով ճանչցուած, կ'ականարկէ ծաղիկներուն, որոնցմով զարդարուած կ'ըլլայ բնութիւնը այդ շրջանին. յատկապէս անոր համար՝ որ հայկական բարձրաւանդակի հովիտներն ու լեռնադաշտերը կարմիր կը ներկուին կակաչներու շատութենէն:

4. Երևումն Խաչի կամ Պայծառ Կիրակի:

Ա) Յիշատակն է 351 թուականին, Հոգեգալստեան տօնին օրը, առտուան ժամը 3-ին, ահաւոր մեծութեամբ լուսաւոր խաչի երևելուն, Երուսաղէմի երկնականարին վրայ, մէկ ծայրը երկարելով մինչև Գողգոթա, իսկ միւս ծայրը՝ մինչև Ձիթենեաց լեռ:

Բ) Մահուան գործիք խաչը, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խաչելութենէն ետք դարձաւ քրիստոնեաներու յաղթանակի ու պարծանքի առարկան, և պայծառացուց ու լուսաւորեց բոլորիս կեանքը: Ահա թէ ինչո՞ւ այս Կիրակին կը կոչուի Պայծառ կամ Լուսապայծառ Կիրակի:

5. Կապոյտ Կիրակի: Թէև այս Կիրակին յատուկ անուն մը չունի մեր տօնացոյցին մէջ, սակայն ոմանք զայն կ'նքած են Կապոյտ անունով, որովհետև օրուան յատուկ Աստուածաշնչական ընթերցումները հիմնական մեզի կը խօսին Յարութեան յոյսին մասին, իսկ կապոյտ գոյնը՝ յոյսի նշան է:

